ՏԱԹև ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեմա՝ Վիլյամ Սարոյանի «Երեք խորհուրդ» հեքիաթի ուսուցումը 5-րդ դասարանում

Հետազոտող ուսուցիչներ՝ Անահիդա Մարտիրոսյան, Արզնիի Սարխոշևի Ս. անվան միջնակարգ դպրոց
Նատալյա Մկրտչյան, Նուռնուսի միջնակարգ դպրոց
Արմինե Արզումանյան , Նուռնուսի միջնակարգ դպրոց

ԵՐԵՎԱՆ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն……3

Դասի պլան ……4

Վ. Սարոյան «Երեք խորհուրդ»…… 7

Եզրակացություն …… 12

Օգտագործված գրականության ցանկ…… 13

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Հեքիաթները (գրական նյութը) որպես երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցության զարգացման անփոխարինելի միջոց» հետազոտական աշխատանքի շրջանակներում մեր առաջ խնդիր ենք դրել ըստ կարելվույն ուսումնասիրել հեքիաթների դերը երեխաների դաստիարակության գործում: Կարևոր է, որ ծնողները և մանկավարժները գիտակցեն, որ հատկապես իրենցից է կախված, թե ապագայում ինչպիսին կդառնա իրենց երեխան: Կլինի նա երջանիկ և վստահ իր ուժերին, թե կլինի կոմպլեքսներով, չարացած աշխարհի վրա՝ չիմանալով իրեն ինչպես դրսևորի՝ չունենալով որոշակի գիտելիք, հմտություն և պաշար: Երեխաների դաստիարակության ընթացքում կարելի է և հարկավոր է համաձայնեցնել այն բնավորության գծերը և երեխաների պահվածքը, որոնք հակասում են ծնողի կամ խնամակալի «նախասիրություններին»: Արվեստի յուրաքանչյուր գործ և նրա հեղինակի անհատականությունը արժևորվում են ստեղծագործության թեմատիկայով, արտահայտման միջոցների ընտրությամբ և այլն: Գեղարվեստական երկի, այս դեպքում հեքիաթի միջոցով գրականության մեջ դրսևորվում է այս կամ այն ժողովրդի ազգային կերպարը, նրա կենսագրությունը, մտածողության ձևը: Իսկ ահա հեքիաթների դերը մանուկների դաստիարակության գործում ինչպես միշտ, նույնպես և այսօր արդիական է:

ՄԱՅՐԵՆԻ 5-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԴԱՍԻ ՊԼԱՆ

1-2-3 դաս

- Թեմա- Վիլյամ Սարոյան «Երեք խորհուրդ»
- Հիմնական հասկացություն՝- Ընթերցանություն
- Ենթահասկացություն - Տեքստի տրամաբանություն , տեքստի գեղագիտություն
- Խաչվող կամ ընդհանրական հասկացություն – Ժամանակ և տարածություն
- Միջառարկայական կապեր – Աշխարհագրություն
- Նպատակները - 1. Ձևավորել սովորողների վարժ, արտահայտիչ ընթերցանություն

  2. Տեքստը հասկանալու , հիմնական գաղափարը մատնանշելու

  3.Տեքստի գեղագիտությունը պատկերավոր արտահայտությունների դերը հեքիաթում ներկայացնելու կարողություն

  Սովորողի դիրքորոշում – 1. հոգատար վերաբերմունք մարդկանց հանդեպ

  2.Մարդկային հարաբերությունների գեղեցկության ընկալում
- Վերջնարդյունքներ – 1. Կարդա հասկանալով և կազմի հեքիաթում պատմվող դեպքերի պլանը

  2. Առանձնացնի հեքիաթի գլխավոր միտքն արտահայտող նախադասությունները

  3. Գտնի և բացատրի պատկերավոր արտահայտությունները, ցույց տա դրանց տեղը տեքստում
- Արժևորի մարդկային հարաբերությունների գեղեցկությունը
- Անհրաժեշտ նյութեր – 1. Դասագրքի տեքստը

  2. Աղյուսակներ
- Կիրառվող մեթոդներ –1. Հեքիաթի քարտեզ

  2. Ճամպրուկ

Ուսուցչի ընթերցանությունից հետո աշակերտներին տրվում է հանձնարարություն.
- Սիրելի՛ աշակերտ, աշխատի՛ր ինքնուրույն կամ ընկերոջդ հետ

ԲԱՌԱՐԱՆ

Բառը	Բացատրությունը	Հոմանիշը	Հականիշը	Նախադասությունը, որում կիրառված է բառը
Հետմիջօրե	կեսօրից հետո	երեկոյան	առավոտյան	Կիրակնօրյա հետմիջօրեին իմ տատ Լուսոն մի պատմություն արեց:
Պանդուխտ				
Գարշելի				
Իմաստուն				
Մայրամուտ				
Անբան				

Աշխատանքի ավարտից հետո քննարկվում է ուսուցչի հետ, որից հետո աշակերտներին հոգնածությունից ազատելու համար առաջարկվում է խաղալ «Անձրև» խաղը:

Մեթոդ

« Հեքիաթի քարտեզ»

Աշակերտներն աշխատում են ինքնուրույն.

ՀԱՐՑԵՐ	ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ Գտի՛ր տեքստից և լրացրու՛
Ո՞վ է պատմում այս պատմությունը	Իմ տատ Լուսոն ծույլ ու անբան մի մարդու պատմություն արեց, որ մինչև հիմա չեմ մոռացել:
Ո՞վքեր են հերոսները	
Ի՞նչ է անում գլխավոր հերոսը	
Ու՞մ է հանդիպում ճանապարհին	
Ի՞նչ խորհուրդներ է գնում: Թվարկի՛ր	
Պետք եկա՞ն նրան այդ խորհուրդները	
Ի՞նչը ուրախացրեց ծեր արքային	

Այս մեթոդը կիրառելով լուծեցինք հետևյալ խնդիրները

- Ուշադրության կենտրոնացում
- Հետաքրքրության խթանում

Հղում

Թամարա Ալեքսանյան Վերապատրաստումներ 2022

Սիրելի՛ աշակերտներ, այժմ կընթերցենք հեքիաթը բարձրաձայն

Կիրակնօրյա հետմիջօրեին իմ տատ Լուսոն ծույլ ու անբան մի մարդու մասին պատմություն արեց, որ մինչև հիմա չեմ մոռացել:

Այս մարդը, առավոտից իրիկուն մեջքին պառկած, տնից դուրս չէր գալիս: Նրա կինն էլ ճարահատված գնում է մի խելացի մարդու մոտ, նրանից խորհուրդ առնի, թե ոնց անի, որ իր ծույլ ամուսինը տնից դուրս գա, գնա հաց աշխատի: Խելացի

մարդը կնոջը խորհուրդ է տալիս չիր ու չամիչ շաղ տալ հատակին մինչև դուռը, հետո՝ դուրս։ Ամուսինը տեղից կելնի, չիր ու չամիչը ուտելով՝ դուրս կգա տնից։ Կինն այդպես էլ անում է։ Երբ նրա ամուսինը, չիր ու չամիչ ուտելով, դուրս է գալիս, դուռը փակում է նրա վրա և ասում. -Գնա՛ … գնա՛… մինչև փող չբերես, տուն չեմ թողնի։

Հարց

1. Ի՞նչ իմաստով է գործածվել այստեղ **հաց** բառը; Էլ ի՞նչ իմաստով կարելի է գործածել հացը։
2. Ի՞նչ եք կարծում, ճի՞շտ է վարվում կինը, որ ծույլ ամուսնուն դուրս է անում տանից։
3. Դուք ինչպե՞ս կվարվեիք։

Տասնութ տարի տնից - տեղից կտրված՝ ծույլ ամուսինը թափառում է աշխարհով մեկ։ Իսկ այդ տարիներին նրան հաջողվում է երեք ոսկի աշխատել։ Ինչ արած դա էլ մի բան էր, և նա որոշում է վերադառնալ տուն՝ կնոջ մոտ։

Ճանապարհին նա հանդիպում է մի իմաստուն մարդու, որը, գարեջրատան դռանը նստած, օգտակար խորհուրդներ էր ծախում՝ հատը մեկ ոսկի։

Պանդուխտ ամուսինը մտածելով, որ իր վաստակած երեք ոսկին այնքան էլ մեծ գումար չէ, վճռում է գնել այդ խորհուրդներից մեկը, որն այսպիսին էր. «Երբ վատ բան տեսնես երբեք չասես, որ վատ է»։

Այս մի խրատը նրան այնքան օգտակար չթվաց, այդ պատճառով աղքատ պանդուխտը մի ոսկի էլ տալիս է երկրորդ խրատի համար, որը հետևյալն էր. «Ինչպիսի պայմաններում էլ լինես չվախենաս ջրից, անձրև լինի, առու, գետ, լիճ կամ ծով : Սուզվի՛ր ջուրն ու լողա՛։ Ամենակարող Աստված քեզ ողջ-առողջ դուրս կհանի»։ Սա էլ շատ խորհրդավոր է թվում նրան, և աղքատը իր երրորդ ոսկեդրամն է վճարում վերջին խրատի համար, որ ուղղակի մեկ բառով էր արտահայտվում «Համբերություն»։

Հարց

1. Եկեք քննարկենք՝՝ ի՞նչ է խորհուրդը։

2. Ի՞նչ կարծիք ունեք իմաստունի խորհուրդների մասին։ Արժե՞ր դրանց համար իր ունեցած ոսկիները զոհաբերել։
3. Իսկ իմաստունն այդ խորհուրդները ինչպե՞ս էր ձեռք բերել։
4. Արդյո՞ք բոլոր մարդիկ խորհրդի կարիք են զգում։
5. Իսկ դուք ձեր աշխատած երեք ոսկին ի՞նչ կանեիք։

Այս խրատն էլ իմանալով՝ պանդուխտը շնորհակալություն է հայտնում իմաստունին և շարունակում իր ճանապարհը։ Նա սկսում է քայլել անապատի միջով, որովհետև ո՛չ ձի ուներ, ո՛չ էշ, ո՛չ էլ ուղտ։ Պանդուխտը տասը մղոն էլ չէր անցել, երբ հանդիպում է ուղտերի քարավանին; ճամփորդները շատ հոգնած էին ու ծարավ։ Իսկ փոքրիկ ջրհորում ոնց որ թե ջուր կար, բայց ոչ մեկը չէր համարձակվում մտնել այնտեղ, դրա համար ծարավից մեռնում էին մանավանդ ուղտերը, որոնք չափազանց հոգնած էին ու չէին ուզում ոչ մի քայլ անել։ Պանդուխտը հանկարծ հիշում է իմաստունի խորհուրդը՝ ջրից մի՛ վախեցիր։ Նա ճամփորդներին ասում է ,որ իրեն պարանով կապեն իջեցնեն ջրհորը, հետո՝ դույլերը, սափորները, կժերը՝ ինչ կա - չկա։

Բոլորը հագեցնում են իրենց ծարավը, իսկ պանդուխտն էլ շատ երջանիկ է զգում իրեն,որ գնել է իմաստունի խորհուրդները։ Երբ ուղտերն ու մարդիկ ջրից հագենում են, ջրհորում գտնվող պանդուխտը նրանց խորհուրդ է տալիս՝ ջուր հանեն և առու շինեն։

Հարց

Բոլորը հագեցնում են իրենց ծարավը, իսկ պանդուխտն էլ շատ երջանիկ է զգում իրեն։

1. Ինչու՞ է հերոսը իրեն երջանիկ զգում։
2. Ի՞նչ տեղի կունենար, եթե հերոսը չհիշեր խորհուրդը։
3. Ո՞ր խորհուրդն էր սա։

Որոշ ժամանակ անց, երբ ջրի մակերեսը բավականին իջել էր, պանդուխտը ջրհորում շատ գեղեցիկ դուռ է տեսնում։ Նա բացում է դուռը, մտնում է զարմանահրաշ մի սենյակ, որ երազում էլ չէր տեսել։ Դա արքայի սենյկան էր։ Գահին բազմել էր ծեր արքան նրա մի ծնկին լպրծուն, կանաչ գորտ կար, մյուսին՝ գունդուկծիկ, գիրուկ օձ։ Պանդուխտին շատ տարօրինակ է թվում, որ այդքան փառահեղ տեղում այդպիսի գարշելի արարածներ կարող էին լինել։ Ծերունին բարձրացնում է աչքերը, նայում է պանդուխտին և ասում.

-Ողջու՛յն նրան, ով մտել է այնտեղ, ուր նույնիսկ օձաձկները չեն երևացել այս մի քանի հարյուր տարիներին։ Պանդուխտը գահասենյակի հարստությունից ու պերճանքից կարկամում մնում է։

Ծեր արքան հարցնում է.

Պանդուխտը հանկարծ հիշում է իմաստունի մյուս խորհուրդը՝ «Երբ վատ բան տեսնես, երբեք չասես, որ վատ է»։ Նա պատասխանում է.

- Երիտասարդություն և ուժ։

-Այդ պահին գորտն ու օձը կերպարանափոխվում են և դառնում շ՛ատ գեղեցիկ, ուժեղ տղամարդիկ։

Իսկ արքան, որ մի քանի դար ուզում էր հանդիպել պանդուխտի նման մեկին, շատ է ուրախանում։

-Այդ պատասխանիդ համար ես քեզ կնվիրեմ ամեն ինչ։ Միայն թե ասա՛ սրտիդ ուզածը։

Հարց

1. Այս անգամ ո՞ր խորհուրդն է հիշում հերոսը։
2. Ի՞նչ պատասխան է տալիս արքային։
3. Ի՞նչ նկատի ուներ հերոսը՝ երիտասարդություն և ուժ ասելով։
4. Ի՞նչ կապ եք տեսնում երիտասարդության և ուժի միջև։
5. Երբ դուք տեսնեիք այդ գարշելի արարածներին ու արքան նույն հարցն ուղղեր ձեզ, ի՞նչ պատասխան կտայիք։

Պանդուխտը արքային պատմում է վերջին տասնութ տարիների իր կյանքը։

Ծեր արքան այնքան ոսկի և գոհարեղեն է նվիրում, որ տասը արքաների կբավականացներ ։ Հետո խորհուրդ է տալիս վերադառնալ տուն՝ կնոջ մոտ։ Արդեն հարուստ պանդուխտը, լավ գին վճարելով, գնում է անապատում իրեն հանդիպած ուղտերի քարավանը, որի երկարությունը հինգ մղոն էր։ Վերջապես նա տուն է վերադառնում։

Հարց

1. Քանի՞ տարի էր, ինչ տանից հեռացել էր։
2. Եկե՛ք վերլուծենք գոհարեղեն բառը։
3. Որքա՞ն կիլոմետր պետք է անցներ, որ հասներ տուն։ Հեքիաթում ի՞նչ բառով է արտահայտված ճանապարհի երկարությունը։
4. Ի՞նչ է գնում հերոսը այդքան գումարով։ Իսկ դուք ի՞նչ կգնեիք։

Նախքան տուն մտնելը պանդուխտը մտքում ասում է. «Ես պետք է համոզվեմ՝ կինս հավատարի՞մ է եղել այս տասնութ տարիներին»։ Նա բարձրանում է իր տան կտուրը, երդիկից նայում, տեսնում է՝ երկու մահճակալներից մեկին կինն է պառկած, մյուսին՝ անծանոթ մի տղամարդ։

Ամուսինը շատ է վշտանում։ Որոշում է իջնել կտուրից, սպանել այդ մարդուն, կնոջը և իրեն։ Հետո հիշում է իմաստունի երրորդ խորհուրդը՝ համբերի՛ր։ Նա պառկում է կտուրին՝ աչքերը հառելով երկինք։ Քիչ անց մահճակալի ճռճռոց է լսում, հետո այդ անծանոթ մարդու ձայնը, որը տեղից ելնելով ասում է.

-Մայրի՛կ, ծարավ եմ։

Եվ ամուսինը հասկանում է, որ անծանոթն իր հարազատ որդին է։ Նա իջնում է կտուրից, երբ արդեն մայրամուտ էր։ Բախում է դուռը։ Կինը բաց է անում, բայց չի ճանաչում ամուսնուն։ -Ես քո ամուսինն եմ։ Դու ինձ տասնութ տարի առաջ տնից դուրս արեցիր, ասացիր՝ տուն չգաս, քանի դեռ չես հարստացել։ Հիմա ես շատ հարուստ մարդ եմ, դրա համար վերադարձել եմ։ Կինն իրենց բակում տեսնում է հարյուրավոր ուղտերից

կազմված քարավանը՝ բազմաթիվ հրաշալիքներով բեռնված։ Նա ողջագուրվում է ամուսնու հետ, նրան ներս է հրավիրում, ծանոթացնում իրենց որդու հետ։

Հարց

1. Երբ հասնում է իր տուն, ի՞նչ է անում գլխավոր հերոսը;
2. Ո՞ր խորհուրդն է գալիս իրեն օգնության։
3. Ի՞նչ կպատահեր եթե չհիշեր խորհուրդը։
4. Իսկ դու՞ք ինչպես կվարվեիք։
5. Ի՞նչ եք կարծում եթե ամուսինը դատարկաձեռն վերադառնար, կինը կրկին կընդունե՞ր ամուսնուն։
6. Եկե՛ք վերլուծենք ողջագուրվել բառը։

Տնային առաջադրանք

Օգտվելով «Ճամպրուկ» մեթոդից տեղադրի՛ր համապատասխան տեղերում։

• Ի՞նչ ընկալեցի	• Ի՞նչ սովորեցի
• Ի՞նչ զգացի	• Ի՞նչը դուր չեկավ

Այս մեթոդը կիրառելով կունենանք

- Երևակայության զարգացում
- Հեքիաթից ամենակարևորը ընկալելու իր հետ տանելու կարողության զարգացում

Հղում

Ժաննա Հարությունյան, Վերապատրաստումներ 2022թ.

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հեքիաթները (գրական նյութը) որպես երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցության զարգացման անփոխարինելի միջոց» խորագրով հետազոտական աշխատանքի շրջանակներում ուսումնասիրության են ենթարկել երեխայի մտածողության, խոսքի և հաղորդակցական կարողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկություններն ու վեր հանել երեխայի զարգացման գործում հեքիաթի դաստիարակչական նշանակությանն առնչվող կետերը՝ այն եզրակացությանը հանգելով, որ խոսքի զարգացման խնդիրների մեջ իր առանձնահատուկ տեղն ունի գեղարվեստական խոսքի հետ երեխայի ծանոթացումը: Այստեղ խոսքը նախևառաջ հեքիաթների մասին է:

Հեքիաթը մեծ նշանակություն ունի երեխայի անձի ձևավորման համար որպես երեխայի խոսքի հարստացման սկզբնաղբյուր: Գեղարվեստական գրականությունը հարստացնում է բառապաշարը, զարգացնում պատկերային խոսքը, գեղագիտական ճաշակը և նպաստում բարոյական հասկացությունների ձևավորման: Մեր կողմից կատարված ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հեքիաթների միջոցով կարելի է երեխայի մեջ բնավորության, գործելակերպի դրական հատկանիշներ դաստիարակել: Այնտեղ կա բարի և չար ուժերի պայքար, և մշտապես օգնելու պարտականությունը, սերը, կարեկցանքը: Հեքիաթների հրաշք աշխարհը գրավում է երեխաների և այն, ինչ որ նրանք չեն կարող տեսնել իրականության մեջ, տեսնում են այդ գեղեցիկ աշխարհում: Հեքիաթներն ունեն կրթիչ և դաստիարակիչ ուժ, ուստի հեքիաթը թույլ է տալիս դաստիարակել, դրականի վրա հենվելով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

- Ամիրջանյան Յուրի Ա. Ա. Ս.Սահակյան Մանկավարժություն»Մանկավարժ» 2005թ.
- 5-րդ դասարան մայրենի Վ. Սարոյան «Երեք խորհուրդ» 2019թ.
- Արզումանայն Ս. Էլդա Գրին, իրավաբանական հոգեբանություն 2004թ.
- Թամարա Ալեքսանյան, Վերապատրաստումներ 2022թ.
- Ժաննա Հարությունյան, Վերապատրաստումներ 2022թ.